«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱԿԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ <<Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները>>

Հետազոտող ուսուցիչ՝Մերինե Հակոբյան

Ուսումնական հաստատություն՝ Մխչյանի Ք. Ալավերդյանի անվան միջնակարգ դպրոց

2023-2024 ուստարի

Բովանդակություն

Ներածություն _ 2

Գրաճանաչության կազմակերպման առանձնահատկությունները

.Վաղ գրաճանաչության առանձնահատկությունները----------4

.Գրաճանաչության ժամանակակից `վերլուծական – համադրական

հնչյունաբառային մեթոդը: ----------6

.Գրաճանաչության կազմակերպման գործընթացին ներկայացվող

մանկավարժական պահանջները: ---------- --8

.Նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրները: ---------- 9

.Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները: --12

.Կարդալու կարողության ձևավորման և զարգացման փուլերը: ----14

.Գրելու ուսուցումը այբբենական շրջանում: ----------15

.Տառերի գրուսուցման դասի հիմնական մեթոդական շղթան: ---------16

.Հետայբբենական շրջան ----------17

Եզրակացություն ----------21

Գրականության ցանկ ----------

Ներածություն

Հայ ժողովուրդն իր պատմության բոլոր քառուղիներում կարևորել է մանուկներին գրաճանաչ դարձնելու խնդիրը : Ինչպիսի օրհասական պայմաններում էլ որ եղել է հայ մարդը, որքան էլ որ դժվար է եղել նրա հանապազօրյա վաստակը ,նա իր կյանքի նպատակն է համարել սերնդի կրթությունը: Եվ այսպես, օրեցօր, տարեցտարի կազմավորվել և հղկվել են մանուկներին գրաճանաչ դարձնելու հնարներն ու միջոցները՝հասնելով մեզ առավել ձևավորված ,կատարելագործված և մշակված:

5-6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը ժամանակին նախապատրաստելը նպաստում է նրանց մեջ ուսումնական աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն, անհամեմատ հեշտացնում է մանկապարտեզային կյանքից անցումը դպրոցական կյանքին, ուսումնառությանը: Ապահովվում է նաև կրթության երկու աստիճանների՝ նախադպրոցական և դպրոցական տարրական ուսուցման միջև եղած անհրաժեշտ հաջորդականությունը:

Երկարամյա հետազոտությունների արդյունքում /Ղ.Աղայանից մինչև Ա.Տեր –Գրիգորյան / հղկվել է գրաճանաչության մեթոդիկան ,որի միջոցով վերլուծական –համադրական աշխատանքի հիման վրա ձևավորվում են սովորողների գրելու և կարդալու տարրական կարողությունները, ինչպես նաև ապահովվում է նրանց խոսքի արդյունավետ զարգացումը:

Գրաճանաչության մեթոդը կարդալ և գրել սովորեցնելու միջոց է ,որի հիմքում դրված է լեզվի հնչյութերի ու տառերի փոխհարաբերությունը և ուսուցվող լեզվական միավորը:

Հնարավորություն է տալիս բանավոր խոսքը ճշտությամբ գրանցել տվյալ լեզվի հնչյութները մարմնավորող գրաֆիկական սիմվոլների կամ այբուբենի միջոցով ,այսինքն ՝ գրել սովորեցնել և այդ պայմանական նշանները վերստին իրենց համապատասխան հնչյութերին վերածելու միջոցով վերականգնել բանավոր խոսքը :Հայ դպրոցում գրաճանաչության ամենահին ***մեթոդը հնչյունային է ,*** որի հիմնադիրն ու առաջին գործադրողը եղել է Մեսրոպ :

Մանկավարժի դիրքորոշումը դասերի կազմակերպման ընթացքում,ինչպես նաև երեխաների առօրյա կյանքում,հնարավորություն է տալիս նրանց ինքնուրույն փորձ կուտակել և իմաստավորել այն: Նման իրավիճակում ուսուցչի հիմնական դերը կայանում է նրանում , որ նա երեխաների մոտ ստեղծում է խթանիչ իրավիճակ շրջապատող իրականության ,աշխարհի ճանաչման մասին գիտելիքներ ձեռք բերելու համար ,և երեխան ուսուցման ընթացքում պահպանում է հավատը սեփական ուժերի հանդեպ, ինքնավստահությունը:

Երեխայի նկատմամբ վերաբերմունքի փոփոխման մոտեցմամբ /անհատական կողմնորոշման սկզբունքով,միշտ հիշելով,որ երեխան անհատականություն է, իսկ յուրաքանչյուր երեխա ուսուցչից պահանջում է անհատական մոտեցում,և չպետք է սահմանափակվել վարչական հրահանգներով,որոնք կապված են ուսուցողական խնդիրների կամ կանոնակարգային հարցերի լուծման հետ / ուսուցչի դիրքորոշումը կհանգեցնի ուսուցման և դաստիարակության արդյունավետ բարձրացմանը, մեծահասակի նկատմամբ երեխայի վստահության խնդրի լուծմանը:Առաջնորդվելով անհատակողմնորոշիչ մոդելով,որի նպատակն է անհատի ձևավորումը, ուսուցիչը երեխայի զարգացումը չի հարմարեցնում եղած ծրագրին ,կանոններին,այլ երեխային օգնում է և նախազգուշացնում ՝կանխելու նրա անհատական զարգացման հնարավոր դժվարությունների առաջացումը:

Երեխային տրվում է ազատ զգալու և գործելու հնարավորություն:

Գիտելիքները և հմտությունները դիտվում են ոչ թե նպատակ, այլ անհատի զարգացման միջոց:

Տառաճանաչության ուսուցման ծրագրի բովանդակության հիմնական ***խնդիրները*** բառի հնչյունային կառուցվածքի մեջ կողմնորոշվելու կարողությունների զարգացումն է, երեխայի գրելու ցանկության և հմտությունների ձևավորումը երեխայի զարգացմանը զուգընթաց:Պետք է նպաստել, որ երեխայի գրելու ցանկությունն ու կարողությունը ձևավորվի երեխայի զարգացմանը զուգընթաց:

Գրաճանաչության ուսուցման հիմնական ***խնդիրներն են*** կրտսեր դպրոցական վաղ տարիքի երեխաների խոսքային գործունեությունը և դրա հիման վրա ձևավորվող խոսքային կարողությունները/գրավոր և բանավոր/:

Աշխատանքի ***նպատակն է*** ուսումնասիրել հայոց լեզվի գրաճանաչության պատմության մեջ գոյության մեջ ունեցող փորձն ու զարգացման ընթացքը ,վաղ գրաճանաչությունը `որպես երեխաներին դպրոցին նախապատրաստելու միջոց:

Աշխատանքի ***արդիականությունը*** պայմանավորված է վաղ ուսուցման ծրագրային նոր պահանջներով և գրաճանաչության կազմակերպման գործընթացի իրականացման վերոնշյալ խնդիրների `այսօրվա համար հույժ կարևորությամբ:

Աշխատանքի նպատակից էլ բխում են հետևյալ ***խնդիրները*** `

.ուսումնասիրել գրաճանաչության կազմակերպման գործընթացի առանձնահատկությունները դպրոցում

.ուսումնասիրել հետազոտվող թեման գիտամեթոդական գրականության մեջ, ինչպես նաև գործնականում:

Վաղ գրաճանաչության առանձնահատկությունները

Վաղ գրաճանաչության ծրագիրը նախատեսում է՝

1.Ձևավորել պատկերացում պատմության և նախադասության մասին.

.սովորեցնել խոսքից կամ պատմությունից առանձնացնել նախադասությունը

.կազմել 2-4 բառ ունեցող նախադասություններ

.սովորեցնել նախադասությունը տրոհել բառերի

.ծանոթացնել վանկ տերմինին

.սովորեցնել բառերը բաժանել վանկերի

2.Գաղափար տալ հնչյունի մասին.

.սովորեցնել հնչերանգով առանձնացնել հնչյունը, որոշել բառի հնչյունների քանակը

.գաղափար տալ ձայնավոր և բաղաձայն հնչյունների մասին

.անվանել բառեր տրված հնչյուններով

.ձևավորել հնչյունային տարբեր կառուցվածք ունեցող բառերը վերլուծելու կարողություն , բնութագրել առանձնացված հնչյունները ,որոշել բառերի շեշտված մասերը

.գաղափար տալ մեծատառի և փոքրատառի մասին

.հայերենի բոլոր հնչյուն-տառերի ուսուցում

.գաղափար տալ տպագիր խոսքի մասին

.ծանոթացում տետրին:

Ուսուցման ընթացքում լայնորեն օգտագործվում են դիդակտիկ խաղեր ,խաղ-վարժություններ,հանելուկ-խնդիրներ,շուտասելուկներ և այլն,որոնք ուղղված են վաղ գրաճանաչության նախնական գիտելիքների ու կարողությունների կրկնությանը,ճշտմանը և ընդաձակմանը:

Գրաճանաչությունն ունի զարգացնող բնույթ :Վերլուծական ,համադրական խոսքային վարժությունների համակարգի միջոցով ապահովվում է երեխաների մտավոր զարգացումը,որը կառուցվում է 5-6 տարեկան երեխաների կենդանի խոսքի,խոսքային կենսափորձի ,կապակցված խոսքի համակարգի,խոսքային լսողության զարգացման հիման վրա:Երեխաներին պատկերացում է տրվում

նախադասություն-բառ-վանկ-հնչյուն վերլուծական շղթայի մասին,ինչի միջոցով զարգանում է ոչ միայն երեխաների մտավոր կարողությունները,այլև հոգեկան գործընթացները՝ուշադրությունը,հիշողությունը,մտածողությունը,նաև՝կամքը,հույզերը,զգացմունքները,զգայարանները,այսինքն՝ ողջ հոգեկան աշխարհը՝ազդելով զարգացումն ապահովող բաղադրիչների վրա ,որոնցով պայմանավորվում են ուսուցման գործընթացի նպատակների և խնդիրների իրականացումը: Գրաճանաչության նախապատրաստման շրջանում հատուկ աշխատանք է տարվում նկարի,տեսածի,լսածի մասին կապակցված ու ամբողջական ձևով

պատմելու,խոսքից կամ պատմությունից նախադասությունն առանձնացնելու, նախադասությունը բառերի վերլուծելու և այդ բառապաշարից բառն անջատելու,բառը վանկերի բաժանելու,վանկերը հնչյունների վերլուծելու և այդ հնչյունների շարքից անհրաժեշտ հնչյունն առանձնացնելու ուղղությամբ:

Այս տարիքի երեխաների համար խոսքը դառնում է ուսումնասիրության առարկա:Ուսուցիչը զարգացնում է հատուկ վերաբերմունք բանավոր խոսքի նկատմամբ `որպես լեզվական իրողություն:Նա սովորեցնում է կատարել բառի հնչյունային վերլուծություն / այդ աշխատանքը կատարվում է ողջ տարվա ընթացքում/,որակապես բնութագրել առանձնացված հնչյունները,որոշել բառերի շեշտված մասերը և ճիշտ օգտագործել համապատասխան տերմինները:

Ուսուցիչը սովորեցնում է ,որ երեխան ճիշտ դիրքով պահի գիրքը,տարբերի գրքի կամ տետրի շապիկը,երեսը,թերթը,տողը,իմանա ,որ տպագիր խոսքն իմաստ ունի,ընթերցվում է ձախից աջ, վերևից ներքև:

Գրաճանաչության նախապատրաստման գործընթացը զարգացնող դարձնելու հիմնական պահանջը երեխաների ուսումնական գործունեության ընթացքում `դա ինքնուրույն աշխատանքի ծավալումն է և սիմվոլիկ զննականության օգտագործումը,որի համար պետք է ստեղծել անհրաժեշտ պայմաններ:Գրաճանաչության նախապատրաստման հաջորդ սկզբունքը դաստիարակող ուսուցման սկզբունքն է ,որը դիդակտիկայում կիրառվող հիմնարար սկզբունքներից է:Գրաճանաչության մեջ ընդգրկված նյութերը նպաստում են երեխաների այնպիսի որակների ձևավորմանը ,ինչպիսիք են՝ կազմակերպվածությունը,կարգապահությունը, ակտիվությունը, նստակյացությունը:

Սկսած առաջին դասից `ուսուցիչը պետք է աշխատանք տանի ոչ միայն լեզվական նախնական գիտելիքներ հաղորդելու,այլև երեխաների խոսքը, երևակայությունը,վերլուծական մտածողությունը,դիտողականությունը,միտքը զարգացնելու ուղղությամբ:Այս շրջանում օգտագործվող շուտասելուկները, հանելուկները մեծապես նպաստում են երեխայի մտքի, ուշադրության, վերլուծա-համադրական կարողությունների զարգացմանը:

Անհրաժեշտ է զարգացնել երեխաների բանավոր խոսքը,հնչյունային լսողությունը,հնչարտաբերման կարողությունը,հարստացնել արտահայտիչ և կապակցված ու գրական խոսք:

Երեխան պետք է կարողանա առանց թեմայից շեղվելու, հաջորդականորեն, առանց ավելորդ ու անտեղի կրկնությունների ,պատմել իր տեսածի,լսածի մասին,վերապատմել ժողովրդական հեքիաթներ,նկարագրելով առարկան ու երևույթը`թվելով դրանց էական հատկանիշներն ու տարբերությունները:Նա պետք է կարողանա օգտվել պատկերավոր արտահայտություններից ,կազմել փոքրիկ պատմվածքներ նկարի վերաբերյալ`ուսուցչի առաջադրած թեմայով, լրացնել կիսատ թողած պատմություն և այլն :

Գրաճանաչության ժամանակակից `վերլուծական – համադրական հնչյունաբառային մեթոդը

Գրաճանաչության ուսուցման մեթոդիկայի պատմական զարգացման գործընթացում մեկը մյուսին փոխարինել են տարբեր մանկավարժահոգեբանական հիմնավորում ունեցող մեթոդներ , հիմնարար տեսություններ, որոնք այս կամ այն տեսքով, ժամանակի ընդգրկումով ,նյութերի և միջոցների ընտրությամբ և դրանցով աշխատելու մեթոդիկայով անցնում են այբբենարանից այբբենարան ,մեթոդիկայից մոթոդիկա:

.Այդ դիրքորոշումներից մեկը վերաբերում է գրաճանաչության ուսուցման կազմակերպման կառուցվածքային մոտեցումների ամբողջությանը ,կարդալու և գրելու նախնական կարողությունների ,բանավոր խոսքի զարգացման և կատարելագործման հիմնարար ուղղություններին,հիմնական աստիճանների սահմանմանը,դրանց պահպանմանը ,որոնք կարևոր են ծրագրային նյութի յուրացման գործում:

.Մյուս դիրքորոշումները վերաբերում են այն նյութի բացահայտմանը, դիտարկմանը և մանրամասնմանը,որոնք կապված են գրաճանաչության առանձին փուլերի հետ:

.Կան նաև դիրքորոշումներ,որոնց կրողները բացահայտում են և մեկնաբանում առավել նշանակալի և արժեքավոր դիդակտիկ միջոցների կիրառման հնարավորությունները:

Վերլուծական-համադրական հնչյունաբառային մեթոդի հիմնական առանձնահատկությունն այն է ,որ գրաճանաչության ուսուցման ժամանակ որպես կարդալու ամենափոքր միավոր առաջադրվում է բառը: Սակայն սա չի նշանակում ,որ երեխաներին գրաճանաչ դարձնելիս չի կարելի բառը վանկատել. բազմավանկ բառերի կարդալու ուսուցման ժամանակ այբբենարանում առաջարկվում է բառը բաժանել վանկերի `առանց խախտելու նրա ամբողջականությունը:Այս խնդրի լուծման ժամանակ իբրև մեթոդական հնար օգտագործվում են վանկատման կորերը,որոնք տրվում են բառի տակ:

Այս մեթոդով կարդալ սովորեցնելիս երեխաներին նախ առաջարկվում են միավանկ բառեր,որոնք նրան պիտի կարդան միանգամից,այնուհետև այդ բառերը <<աճեցնում>> ենք նախ`սկզբից,ապա`վերջից. միավանկ բառին ավելանում են մեկ տառ կամ տառեր,վանկեր. կարդալու համար նաև առաջարկվում են փոփոխվող տառերով բառեր:

Օրինակ՝ նախ առաջա է կարդալ ***սա*** ,ապա ***սասա***,այնուհետև՝ ***սար***

Այսպիսով՝ ստեղծվում են այսպիսի բառաշարքեր.

շուն	նուշ	տուն
աշուն	անուշ	տունկ
	Անուշիկ	սունկ

Գլոբալ մեթոդի կիրառման առանձնահատկությունները դրսևորվում են նաև տառի գրուսուցման գործընթացում.թեև երեխաները նախապես ծանոթանում են տառի մասնիկներին /սկսած նախաայբբենական շրջանից/,նրանց համակցման ձևերին, սակայն տառը գրում են միանգամից: Գրաճանաչության գործընթացում երեխաները ծանոթանում են հայերենի հիմնական հնչյուններին ,սովորում են դրանք լսել և առանձնացնել խոսքում ,նշել դրանք տառերով , վերլուծել բառի ահնչյունները ըստ հաջորդականության:Ուսումնասիրվող հնչյունը տառով նշում է միայն նրա՝ բառից անջատումից և այլ բառերի մեջ

/բառասկզբում,բառամիջում,բառավերջում/ նրա հնչեղությունն ուսումնասիրելուց հետո:

Հնչյունային վերլուծությունը նախորդում է համադրման փուլին, սակայն երկու փուլերն իրար սերտորեն կապված են :Մեթոդը կոչվում է վերլուծական-համադրական, որովհետև հնչյունի ուսումնասիրությունը իրականանում է բառի շուրջ տարվող վերլուծական և համադրական

աշխատանքի միջոց. նորածանոթ հնչյուն-տառի ուսուցումն սկսվում է բառի <<քայքայումից>> մինչև հնչյուն/վերլուծություն/, այնուհետև բառի կազմի մեջ մտնող բոլոր հնչյունների համաձուլում/համադրություն/ ՝ ամբողջական կարդալու համար: Վերլուծական-համադրական հնչութաբառային մեթոդը ժամանակակից արդյունավետ մեթոդ է համարվում ,որում նկատվում են ՝

<u>Անձի ձևավորման հնարավորությունները.</u>

.գրաճանաչության ուսուցումը կրում է դաստիարակող բնույթ ,այբբենարանի նյութերը նպաստում են դաստիարակչական խնդիրների լուծմանը,

.ուսուցումն ունի զարգացնող բնույթ .վերլուծական և համադրական խոսքային վարժությունների համակարգի միջոցով ապահովվում է մտավոր զարգացումը, իրականացվում են բնության դիտումներ ,ծանոթացում շրջակա աշխարհին

<u>Հոգեբանալեզվաբանական հնարավորությունները.</u>

.ուսուցումը հենվում է սովորողների կենդանի խոսքի , խոսքային կենսափորձի, օրինակելի բնագրերի վրա, իր մեջ ներառում է կապակցված խոսքի համակարգ ,

.վերլուծական –համադրական աշխատանքի հիմքում դրվում է հնչյունը/տառը ներմուծվում է որպես հնչյունի ներկայացման միջոց միայն հնչյունի ուսումնասիրությունից հետո / ,

.աշխատանքի ընթացքում կարևորվում է հնչյունային վերլուծությունը, հնչյունների վերարտադրությունը, խոսքային լսողության զարգացումը,

.որպես կարդալու ամենափոքր միավոր ՝ընդունվում է բառը,

.հատուկ ուշադրություն է դարձվում վանկային աշխատանքին .բառի վանկային կառուցվածքը պիտի հստակորեն գիտակցվի երեխաների կողմից.

.կարևորվում է ոչ միայն հնչյունների առանձնացումը բառից, նրանց քանակի որոշումը բառի մեջ ,այլ նաև նրանց միջև եղած կապերի որոշումը.

.ներմուծվում է պատմություն –նախադասություն-բառ-վանկ-հնչյուն վերլուծական շղթան:

<u>Կազմակերպական հնարավորությունները.</u>

.հիմնավորում է հնչյուն- տառերի ուսուցման ընտրված հաջորդականությունը,

.առանձնանում են գրաճանաչության նախաայբբենական, այբբենական և հետայբբենական շրջանները,

.գրավորը չի առանձնանում կարդալուց .ընթանում է զուգորդված,

.պարբերաբար հաղորդվում են լեզվական նախագիտելիքներ /գործնական հիմքի վրա/:

<u>Ուսուցման հնարները.</u>

.տարբերակված և անհատականացված մոտեցում սովորողների նկատմամբ ՝ պայմանավորված կարդալուն ու գրելուն սովորողների պատրաստվածության և ընդհանուր զարգացման տարբերություններով,

.սիմվոլիկ զննականության ՝ գծապատկերների/մոդելավորման/ տարրերի ներմուծում,

.հնչյունի, վանկի, բառի,նախադասության գծապատկերների ներմուծում:

Գրաճանաչության կազմակերպման գործընթացին ներկայացվող մանկավարժական պահանջները

Գրաճանաչության կազմակերպման գործընթացի բովանդակությանն ու մեթոդներին ներկայացվում են սովորողների տարիքային առանձնահատկություններով և հնարավորություններով պայմանավորված որոշակի պահանջներ:Դրանք մասնավորապես բխում են հոգեկան այն գործընթացներից ,որոնք ուսուցման ժամանակ ակնառու դեր ունեն:

Հենց այդ գործընթացներով պայմանավորված՝ գրաճանաչության ուսուցումը կազմակերպվում է այնպիսի մեթոդներով և հնարներով,որոնք հենվում են ուուցման մատչելիության, զննականության և անհատականության սկզբունքների վրա:Դասի ժամանակ կարևոր դեր է գրավում խաղը:

Գրաճանաչության գործընթացին ներկայացվող հիմնական մանկավարժահոգեբանական պահանջներն են՝

.Դասի համապատասխան փուլում ուսուցիչը հաղորդում է ,թե իրենք ինչ պիտի անեն և ինչու, իսկ աշխատանքի ավարտից հետո ամփոփում ՝ինչ արեցին և ինչպես աչեցին:

.Առաջադրանքներն ու հարցերը ձևակերպվում են հակիրճ,հստակ և ոչ երկարաշունչ նախադասություններով:

.Գերակշռում են համադասարանային և խմբային աշխատանքները ,ուսուցչուհին մշտապես ցույց է տալիս առաջադրանքի կատարման նմուշները կամ կատարման ընթացքը:

.Կարդալու ուսուցման դասի ժամանակի մեծ մասը պիտի տրամադրվի կարդալուն ,իսկ գրավոր դասինը՝գրելուն:

.Դասի ընթացքում անհրաժեշտ է մի քանի անգամ փոխել երեխաների գործունեության տեսակները:

.Դիդակտիկ նյութերը, զննական պարագաները, փոխգործուն մեթոդները , խաղային առաջադրանքները պիտի օգտագործվեն այն չափով,որքանով որ կնպաստեն ուսուցման մատչելիությանն ու հետաքրքրաշարժությանը ՝առանց ծանրաբեռնելու և երեխաների ուշադրությունը շեղելու:

.Դասը պլանավորելիս անհրաժեշտ է նկատի ունենալ ինչպես ամբողջ դասարանի, այնպես էլ առանձին աշակերտների պատրաստականությունը:

.Զգուշորեն վերաբերվել պատժի մեթոդներին ,աշխատել հնարավորինս բացառել,նախընտրությունը տալ խարախուսանքին:

.Աշխատանքը կազմակերպելիս ուսուցիչը պիտի նկատի ունենա,որ գրաճանաչության հաջողությունը կախված է իր լեզվաբանական գիտելիքներից և մանկավարժահոգեբանական ունակություններից և հմտություններից:

Գրաճանաչությունը կազմակերպվում է երեք փուլով՝

նախաայբբենական շրջան

այբբենական շրջան

հետայբբենական շրջան:

Նախաայբբենական շրջանի հիմնական խնդիրները

Գրաճանաչության ցանկացած համակարգում, անկախ հայեցակարգային դիրքորոշումից, ընտրված մեթոդներից, գրեթե առանց բացառության առանձնացվում է հատուկ նախապատրաստական փուլ:Այն ունի գրաճանաչության շրջանի բովանդակությամբ և մեթոդներով, առաջին դասարանցիների տարիքային առանձնահատկություններով պայմանավորված որոշակի խնդիրներ ,որոնք մշակվել են ուսուցման այդ փուլի մանակավարժահոգեբանական ուսումնասիրությունների արդյունքների հիման վրա:

Գրաճանաչության նախաայբբենական կամ նախապատրաստական շրջանի հիմնական խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ ***կազմակերպական և ուսումնական:***

Կազմակերպական խնդիրներ

1.Երեխաներին ծանոթացնել նրանց համար նոր ՝ ուսումնական գործունեության հետ.

.ուսուցչի ծանոթությունը աշակերտների հետ,

.ծանոթություն դպրոցական կյանքին և կարգուկանոնին,

.ծանոթություն աշակերտների իրավունքներին և պարտականություններին,

.սովորեցնել ճիշտ նստել,ձեռք բարձրացնել ,խոսելիս կամ պատասխանելիս անհրաժեշտության դեպքում կանգնել,

.մշակել բարձրաձայն և հստակ պատասխանելու կարողություն,

.սովորեցնել լսել ուսուցչի խոսքը և կատարել հանձնարարությունները,

.սովորեցնել լսել ընկերների պատասխանները և արձագանքել դրանց,

.սովորեցնել գրքից և գրենական պիտույքներից օգտվելու և դրանց նկատմամբ խնամքի կանոնները:

2.Համարեցում նոր՝դպրոցական ուսումնական գործունեությանը/ադապտացիա/:

Ուսումնական խնդիրներ

1.Ուսումնական գործունեությանը աշակերտների պատրաստականության մակարդակի բացահայտում:

Այս խնդրի ուսումնասիրությունը ուսուցիչն սկսում է մինչև ուսումնական տարվա սկսելը՝երեխաներին դպրոց ընդունելու օրվանից:Երեխաների լեզվական պատրաստվածության մակարդակի ուսումնասիրությունը կարևոր նյութ է տալիս ուսուցչին գրաճանաչությունը մեթոդապես ճիշտ կազմակերպելու համար:Ծանոթությունը իրականացվում է աշակերտների հետ կազմակերպվող ակտիվ զրույցի միջոցով:Արդյունքներն ամփոփելու համար ուսուցիչը պիտի իր համար պարզի յուրաքանչյուր աշակերտի՝

ա/կարդալու կարողությունների մակարդակ.

.գիտե մի քանի տառ,

.գիտե զգալի թվով տառեր,

.գիտե բոլոր տառերը,

.կարդում է վանկերով,

.կարդում է բառերով,

.կարդում է տառերով,

.որոշում է տառերի քանակը բառերի մեջ.

բ/գրելու կարողությունների մակարդակ.

.գրում է բոլոր տառերը /տպագիր,ձեռագիր/,

.գրում է բառեր,

.բառերից առանձնացնում է բոլոր տառերը և անվանում է դրանք,

.գիտե որոշ տառեր գրել,

.ոչ մի տառ չի գրում.

գ/հնչյունային վերլուծական կարողությունները.

.բառերն արտասանում է գրական հայերենի ճիշտ շեշտադրությամբ,

.առանձնացնում է հնչյունը բառից և վանկից,

.հնչյուններն արտասանում է որոշակի արատներով,

.ունի կցկտուր,խղճուկ,ցածր խոսք,

.ունի արտահայտիչ խոսք.

դ/բանավոր կապակցված խոսք.

.անգիր գիտե բանաստեղծություններ,

.գիտե և կարողանում է վերարտարդել ունկնդրած պատմվածքները,հեքիաթները,

.կարող է նկարների շուրջ ստեղծել պատմություն,

.տրված հարցերին պատասխանում է ընդարձակ /համառոտ/ նախադասություններով,

.ուսուցչի ներկայությամբ չի խոսում.

ե/խոսքի շարահյուսական կառույցը.

.կազմված է հստակ կառուցվածք ունեցող նախադասություններից,

.կազմված է պարզ նախադասություններից,

.նախադասությունների միջև բացակայում է տրամաբանական կապը,

.անավարտ է թողնում նախադասությունները,

.կազմում է շարահյուսորեն ավարտուն, ամբողջական նախադասություններ:

Այս տվյալները ուսուցչին պետք են ոչ թե ըստ աշակերտների գիտելիքների և կարողությունների մակարդակի դասարանները համալրելու ,այլ դրանք ուսումնական գործընթացում հաշվի առնելու և ըստ դրանց դասը կառուցելու ,իր ուսումնական

ռազմավարությունը որոշելու ,աշակերտների հետ տարվող ֆրոնտալ, անհատական աշխատանքները պլանավորելու և իրականացնելու համար:

2.Նախաայբբենական փուլում աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների սահմանները.

.գաղափար պատմության,նախադասության ,բառի, վանկի,հնչյունի/ձայնավոր, բաղաձայն/ մասին և այդ եզրույթների օգտագործումը խոսքում,

.պարզագույն սիմվոլիկ զննականության օգտագործում /գծապատկեր/ նախադասության ,բառի և վանկի վերլուծության և կառուցման համար,

.ծանոթություն այբբենարանի և տպագիր հիմքով տետրերի հետ,

.վերլուծական – համադրական հնչյունավանկային վարժությունների միջոցով հնչյունային լսողության զարգացում և կատարելագործում,

.ձայնավոր և բաղաձայն հնչյունների տարբերակում գունային սիմվոլի միջոցով և դրանց արտահայտում գծապատկերում,

.ձայնավորի դերի գիտակցումը վանկակազմավորման գործում,

.ամբողջական բառերով ,առանձին դեպքում `վանկերով կարդալու և գրագետ գրելու կարողությունների մշակման նախադրյալների ստեղծում,

.երեխաների բառապաշարի հարստացում,խոսքի զարգացում,

.ձեռքերը գրելուն նախապատրաստում ,մարզում,

.ներկելու, նկարելու, որոշակի գծային սահմանների մեջ հանձնարարվող գործողությունները կատարելու կարողության մշակում,

.հայերենի տառերի մասնիկների ուսուցումը ըստ նրանց չորս տեղադրության,

.ամբողջական տառերով մեկ տողանի տետրում վայելչագրության կանոններին համապատասխան գրելու կարողության մշակման նախադրյալների ստեղծում:

Ունկնդրում և խոսք.

.Ուսուցչի կողմից ընթերցվող հեքիաթների, պատմվածքների, բանաստեղծությունների ունկնդրում և հարցերի օգնությամբ վերարտադրում:Զրույց կարդացած նյութի շրջանակներում, ակտիվ դատողություններ և քննարկումներ երեխաներին մատչելի և հետաքրքիր թեմաներով:

.Մինչդպրոցական ժամանակահատվածում երեխաների իմացած բանաստեղծությունների և նոր սովորածնրի արտասանություն:

.Հարց ու պատասխան .նկարների շուրջ նախադասությունների կազմում:Նկարների համալիրի շուրջ մտքով իրար հետ կապված նախադասությունների կազմում ,նախադասության բառերի քանակի որոշում:

.Պատմում ըստ ունկնդրածի, ըստ հիշողության,ըստ նկարի:

.Բառապաշար. երեխաների ակտիվ բառապաշարի հարստացումը նոր բառերով:Բառերի խմբավորում ըստ ընդհանրացնող անունների /գրենական պիտույքներ,խաղալիքներ,սպասք,ծաղիկներ և այլն/:Բառի առանձնացում նախադասությունից:

.Լեզվական նախագիտելիքներ. խոսքից նախադասության անջատում, նախադասությունների կազմում:Նախադասությունից բառի անջատում:Բառը բաժանել վանկերի, հնչյունների

առանձնացում , բառի հնչյունային կազմի որոշում:Մեծատառը նախադասության ,մարդկանց անունների, ազգանունների, քաղաքների անունների սկզբում և վերջակետը՝վերջում/գծապատկերի վրա/:Գաղափար եզակի և հոգնակի թվի մասին:

Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրները

Գրաճանաչության այբբենական կամ գրուսուցման և նախաայբբենական շրջանների սահմանը հնչյուններից անցումն է տառերին:

Այս շրջանի հիմնական խնդիրներն են՝

.ուսուցանել բոլոր հնչյուն – տառերը /ճանաչել 36 հնչյունները և դրանց գրավոր արտահայտությունը՝հայոց այբուբենի 38 տառերը, ինչպես նաև ***և*** կցագիրը /,

.սովորեցնել ճիշտ համադրել հնչյուններն ու տառերը,

.յուրացնել տառերի համադրումը,

.գործնականորեն յուրացնել վայելուչ գրելու կանոնները,

.մշակել ամբողջական բառերով սահուն կարդալու կարողություններ,

.զարգացնել ընթերցանության նկատմամբ սեր,

.ձևավորել ընթերցողական տարրական կարողություններ,

.զարգացնել խոսքն ու մտածողությունը,

.հաղորդել լեզվական տարրական գիտելիքներ,

.իրականացնել ճանաչողական, դաստիարակչական զարգացնող աշխատանքներ՝նպաստելով երեխաների անձի ձևավորմանը:

Գրաճանաչության փուլում աշակերտների գիտելիքների,կարողությունների և հմտությունների սահմանները

Գրաճանաչության հիմնական փուլի վերջում աշակերտները պետք է տիրապետեն հետևյալ ունակություններին.

1.հստակորեն և ճիշտ արտաբերել հայերենի բոլոր հնչյունները,

2.որոշել բառի հնչյունային կազմը, բառի մեջ հնչյունների հաջորդականությունը,

3.տարբերել ձայնավոր և բաղաձայն հնչյունները,

4.ամբողջական բառերով կարդալ մատչելի, իրենց տարիքին համապատասխան,փոքրիկ բնագրեր,

5.կարդալիս պահպանել հայերենի գրական շեշտը, առոգանությունն ու տրամաբանական դադարները,

6.հասկանալ կարդացածը /ինչպես կազմի մեջ մտնող բառերը, այնպես էլ առանձին նախադասությունները /, պատասխանել բնագրի վերաբերյալ հարցերին, վերարտադրել

կարդացածի բովանդակությունը, կատարել պարզ համեմատություններ, դատողություններ,եզրակացություններ,

7.հայերենի վայելչագրության կանոնների համապատասխան հնչյունատառային վերլուծությունից հետո գրել բառեր ,բառակապակցություններ, նախադասություններ/3-4 բառից կազմված/,

8.արտագրել կամ թելադրությամբ գրել գրության և արտասանության մեջ տարբերություն չունեցող բառեր,օրինակի հետ համեմատելով կամ շշուկով արտասանելով՝ ստուգել գրվածը,

9.գրի առնելով սեփական ուժերով կազմած նախադասությունները, ստուգել և գտնել սխալները:

Ունկնդրում և խոսք.

.ուշադրությամբ լսել ուսուցչի և ընկերների խոսքը, վերլուծաբար ընկալել լսածը,վերարտադրել նույնությամբ կամ ստեղծագործաբար,

.արտասանել այբբենական շրջանում սովորած բանաստեղծությունները,հանելուկները, շուտասելուկներն ու սուտասելուկները,

.պատմել նկարի,էքսկուրսիայի,այն միջոցառումների մասին,որոնց մասնակցել են,

.ընդհանրացնող բառերի-բառախմբերի ընդարձակում:

Լեզվական նախագիտելիքներ.

.հստակորեն զգալ նախադասությունների սկիզբն ու ավարտը:Հաշվել բառերի քանակը նախադասության մեջ,

.իմանալ մեծատառի գրության մասին /մարդկանց, քաղաքների,գյուղերի անունների , նախադասության սկզբում, ստեղծագործությունների վերնագրում, կենդանիներին տրվող անուններում/,

.ճանաչել կետադրական նշանները:

Կարդալու կարողության ձևավորման և զարգացման փուլերը

Կարդալու կարողության ձևավորման ուղղությամբ տարվող աշխատանքները սկսում դեռևս գրաճանաչության նախաայբբենական շրջանից, որի ժամանակ տարվող աշխատանքի մեթոդապես կատարյալ կազմակերպումից է մեծապես կախված կարդալու հետագա ողջ գործընթացը:

Գրաճանաչության մեթոդիկայում կարդալու ուսուցումը տրվում է **հնչյուն-տառ-բառ-բառակապակցություն-նախադասություն-կապակցված խոսք** շղթայով:

Իսկ ինչի՞ց սկսել տառի ուսուցումը,ինչպե՞ս սկսել տառա- ճանաչությունը:Առաջին և կարևոր խնդիրը տվյալ տառի հնչյունի ընկալումն է:Այսինքն `ուսուցումը պիտի հնչյունից գնա դեպի տառ:Անծանոթ հնչյունը երեխային ընկալել տալու համար պիտի սկսել խոսքի ամենամեծ միավորից՝ պատմությունից՝ դրանից առանձնացնելով այն նախադասությունը,որի մեջ կա մեկնաբառը, ապա՝ նախադասությունից առանձնացնել մեկնաբառը:Այնուհետև պիտի գծվի մեկնաբառի հնչյունվանկային գծապատկերը,որոշվեն հնչյունները և մատնանշվի այն հնչյունի վանդակը,որը պիտի նոր ուսուցանվի:

Պատմություն ստեղծվում է այբբենարանի յուրաքանչյուր տառի համար նախատեսված էջի թեմատիկ նկարի շուրջ:Այդ պատմությունը,որը շարադրում է ուսուցիչը կամ աշակերտները՝ուսուցչի օգնությամբ,պիտի բավարարի որոշակի պահանջների.

.կազմված լինի 4-5 նախադասությունից,

.նախադասությունները պիտի լինեն պարզ կամ պարզ ընդարձակ/3_4 բառ/

.բոլոր բառերը հասկանալի լինեն երեխաներին/կամ անհրաժեշտության դեպքում՝բառապաշարի հարստացման նպատակով պարունակեն անծանոթ 1-2 բառ /,

.անպայման օգտագործվեն բառեր,որոնցում հնչում է նոր ուսուցանվող հնչյունը,

.օգտագործվի մեկնաբառը/շահեկան է ,որ այն լինի միավանկ կամ պարզ բառ/,

.նոր ուսուցանվող հնչյունը լսվի բառասկզբում:

Աշխատանքը նոր ուսուցանվող հնչյուն-տառի ուղղությամբ պիտի տարվի **պատմություն-նախադասություն-բառ-վանկ-հնչյուն** մեթոդական շղթայով:

Նորածանոթ հնչյունն ընկալելի դարձնելու համար անհրաժեշտ է կիրառել վարժություններ.

.ասեք բառեր, որոնք սկսվում են տվյալ հնչյունով,

.ասեք բառեր,որոնց վերջում է լսվում տվյալ հնչյունը,

.ասեք բառեր, որոնց մեջ է լսվում տվյալ հնչյունը,

.որոնեք և գտեք `մեր դասարանում որ առարկաներն են ,որոնց անունները սկսվում են նորածանոթ հնչյունով և այլն:

Երբ ուսուցչուհին համոզվում է, որ երեխաները ոչ միայն ընկալում են նորածանոթ հնչյունը ,այլև կարողանում են գտնել նրա տեղը բառի գծապատկերում,բացատրում է,որ երբ խոսում ենք ու լսում ,գործ ունենք հնչյունի հետ,սակայն երբ գրում ենք,տեսնում և կարդում՝տառի հետ:Այսինքն՝տառը հնչյունի պատկերն է :Այնուհետև ցույց է տրվում տառերը՝մեծատառ,փոքրատառ:

Գրելու ուսուցումը այբբենական շրջանում

Տպագիր հիմքով տետրերի միջոցով գրելու ուսուցումը /վայելչագրության/ ուղղությամբ աշխատանքն սկսվում է դեռևս գրաճանաչության նախաայբբենական շրջանում.այս շրջանի ուսուցողական խնդիրներից են մատները գրելուն նախապատրաստելը,հայերենի տառամասնիկների գրությունը, տողի վրա կողմնորոշվելը,տարածական մտածողության զարգացումը:Սրանք կարողություններ են ,որոնց վրա գրաճանաչության շրջանում կառուցվում և զարգանում են կարդալու ունակությունները:

Գրաճանաչության այբբենական շրջանի հիմնական խնդիրներն են.

.զարգացնել և ամրակայել գրենական պիտույքներից օգտվելու , տպագիր հիմքով տետրում կողմնորոշվելու կարողությունները,

.ամրացնել երեխաների ոսկրամկանային համակարգը /մատների ֆալանգները,դաստակը,ողնաշարը,ուսերը,պարանոցը և այլն /,

.մշակել տառապատկերներն ամբողջական ընկալելու և դրանք տետրում տրված օրինակի համաձայն վերարտադրելու կարողություններ,

.իրականացնել վանկերի ,բառերի, բառակապակցությունների գրուսուցումը վայելչագրության կանոնների համապատասխան,

.մշակել տպագիր տեքստից ձեռագիր վերարտադրելու կարողություն,

.սովորեցնել գրել մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն,

.ձևավորել գրած բառերի,բառակապակցությունների,նախադասությունների,բնագրի իմաստը հասկանալու կարողություն,

.մշակել գրությամբ և արտասանությամբ տարբերություն չունեցող բառերն արտագրելու և թելադրությամբ գրելու կարողություն,

.սովորեցնել հնչյունատառային վերլուծությունից հետո գրառել բառեր և նախադասություններ/3-4 բառից կազմված/,

.գրի առնել ինքնուրույն կազմած նախադասությունները/3-4 բառից կազմված/,

.ինքնաթելադրությամբ գրել փոքրիկ չափածո բնագրեր:

Գրուսուցման աշխատանքները մեթոդապես ճիշտ իրականացնելու համար պիտի նկատի ունենալ ,որ գրելու գործընթացն ունի երկու կողմ.**բովանդակային,**որը վերաբերում է կատարվող գրավոր աշխատանքի բովանդակությանը,և **տեխնիկական,**որն անմիջականորեն առնչվում է յուրաքանչյուր առանձին վերցրած տառի գրաֆիկական պատկերին և նրա՝մյուս տառերի հետ ունեցած կապին,բառերի ճիշտ գրությանը և նախադասություններ գրելիս նրանց տեղին:

Ուսուցչի խնդիրն է աշակերտների գիտակցությանը հասցնել այն ճշմարտությունը,որ գեղեցիկ և գրագետ գիրը և գրավորի տետրի կոկիկ և վայելուչ վարումը նպաստում է այնպիսի անձնային որակների ձևավորմանը,ինչպիսիք են

ինքնատիրապետումը,կարգապահությունը,զսպվածությունը,կոկիկությունը,

կազմակերպվածությունը և այլն:Պատահական չէ,որ հաճախ ձեռագրով բնութագրում են ձեռագրի տիրոջը:Երեխաների մեջ պիտի ձևավորել այն համոզմունքը,որ գեղեցիկ, ընթեռնելի ձեռագիրը իր գրածը ընթերցողի նկատմամբ հարգանքի դրսևորում է ,իսկ առաջին դասարանցու գրավորի առաջին ընթերցողն ուսուցիչն է : Սակայն ուսուցիչն էլ իր հերթին պիտի նրբանկատություն և համբերություն հանդես բերի երեխաների ձեռագրի նկատմամբ՝նկատի ունենալով ,որ.

.գրելը խոսքային գործունեության ամենաբարդ տեսակն է,

.գրելը երեխայի անհատականության հետ խստորեն կապված գործընթաց է,

.գրելու կարողությունները ձևավորվում են դանդաղ՝երեխայից խլելով մտավոր, ֆիզիկական և հոգեկան մեծ ջանքեր:

Երեխաներին գրել սովորեցնելու բոլոր փուլերում պիտի հիշել ,որ գրուսուցման իրականացման գործընթացը հենվում է ուսուցման որոշակի սկզբունքների վրա՝զննականություն,գիտակցականություն,աստիճանականություն,երեխաների անհատական առանձնահատկությունների հաշվառում, կարդալու և գրելու համատեղ ուսուցում:

Տառերի գրուսուցման դասի հիմնական մեթոդական շղթան

1.Կազմակերպական –բացատրական աշխատանք:

2.Մատները գրելուն նախապատրաստող վարժություններ:

3.Հնչյունային վերլուծություն. ուսուցանվող նոր հնչյունի առանձնացում բառից:

4.Ծանոթություն նորածանոթ հնչյունի ձեռագիր տառերին,համեմատություն տպագիր տառերին, նմանությունների և տարբերությունների հայտնաբերում:

5.Նորածանոթ տառերի մասնիկների վերլուծություն:

6.Տառի պատկերում գրատախտակին զուգահեռ բացատրություններով և հաշվով:

7.Տառի գրուսուցում օդում:

8. Տառի գրուսուցում թելերով ,լարերով:

9.Տառի գրուսուցում գրատախտակին:

10.Վարժություններ տառերի գրուսուցման ուղղությամբ:

11.Ֆիզկուլտ դադար:

12.Աշխատանք <<Ես սովորում եմ գրել>> տետրում.

.տառի գրուսուցում,

.բառի գրուսուցում,

.բառակապակցությունների գրուսուցում,

.բնագրի գրուսուցում:

13.Ֆիզկուլտ դադար :

14.Նորածանոթ տառի համեմատում ծանոթ տառերի հետ:

Հետայբբենական շրջան

Գրաճանաչության ուսուցման երրորդ՝հետայբբենական շրջանի կրթադաստիարակչական խնդիրներն են.

1.ամրակայել և զարգացնել հասկանալով և վերլուծաբար կարդալու կարողությունները՝ապահովելով կարդալու որակական հատկանիշների որոշակի մակարդակ,

2.կատարելագործել ինչպես վայելչագրական ,այնպես էլ ուղղագրական կանոններին համապատասխան գրելու կարողությունները,

3.հարստացնել բառապաշարը,զարգացնել բանավոր կապակցված խոսքը,

4.համակարգել,ամփոփել և ամբողջացնել գրաճանաչության նախորդ փուլերում երեխաների ձեռք բերած գիտելիքները և կարողությունները,

5.զարգացնել երեխաների բարոյականային որակները,ընդլայնել աշխարհի մասին նրանց ունեցած պատկերացումները,

6.նախապատրաստել բացատրական ընթերցանության:

1.Կարդալու կարողությունների զարգացում

Կարդալու նախնական կարողությունների ձևավորման համար անհրաժեշտ հիմքերի մշակումը սկսվում է դեռևս գրաճանաչության նախապատրաստական շրջանում ,իսկ հետագայում՝ գրաճանաչության շրջանում,ձևավորվում են կարդալու նախնական կարողությունները,աստիճանաբար մշակվում են կարդալու որակական հատկանիշները:Դրանք,անշուշտ,տարրական կրթության ընթացքում զարգանում և կատարելագործվում են աստիճանաբար,սակայն գրաճանաչության հետայբբենական շրջանը գործընթացի արդյունավետության ապահովման կարևոր շրջանն է:

Լավ կարդալ նշանակում է **կարդալ ճիշտ,սահուն,հասկանալով և վերլուծելով կամ գիտակցաբար, արտահայտիչ և արագ:**

Ճիշտ կարդալ նշանակում է կարդալ առանց բառի հնչյունային կազմի աղավաղման՝պահպանելով գրական հայերենի շեշտադրությամբ:

Գրաճանաչության հետայբբենական փուլում **ճիշտ կարդալու մակարդակին ներկայացվող հիմնական պահանջներն են.**

.ճշտորեն,մաքուր և անխառն արտասանել բառի կազմի մեջ մտնող բոլոր հնչյունները,

.կարդալիս չավելացնել և բաց չթողնել տառեր,վանկեր,բառեր,չթռչել տողից տող,<<կուլ չտալ>> բառերի վերջավորությունները,

.պահպանել հայերենի ուղղախոսության կանոնները:

Սահուն կարդալու մակարդակին վերոհիշյալ փուլում ներկայացվում են հետևյալ պահանջները.

.կարդալ այնպիսի տեմպով ,ինչպես խոսում են,

.կարդալիս պահպանել բառերի միջև գոյություն ունեցող տրամաբանական կապերը,

.թույլ չտալ անհարկի դադարներ,

.ամբողջական բառերով կարդալ:

Հասկանալով կամ գիտակցորեն կարդալու մակարդակին հետայբբենական փուլում ներկայացվում են հետևյալ պահանջները.

.հասկանալ և վերլուծել բնագրի տեղեկատվությունը,

.ձայնային ելևէջներով, անհրաժեշտ շեշտադրությամբ և դադարներով ունկնդրին հաղորդել ստեղծագործության բովանդակությունը,

.որոշել ընթերցածի հիմնական միտքը, գաղափարը,պարզ դատողություն անել դրանց շուրջ:

Արտահայտիչ կարդալու մակարդակին այս փուլում ներկայացվում են հետևյալ պահանջները.

.արտահայտչականության տարբեր հնարների միջոցով ներկայացնել ստեղծագործության զգացմունքային և իմաստային կողմերը,

.հստակ և մաքուր արտաբերել ընթերցած բոլոր հնչյունները, վանկերը, բառերը, պահպանել խոսքի բնույթին համապատասխան արագություն և բարձրություն:

Արագ կարդալը իբրև կարդալու որակական հատկանիշ հետայբբենական փուլում **չի կարևորվում**,որովհետև արագ կարդալը համարվում է կարդալու բարձր մակարդակ,երբ լուծված են կարդալու մյուս որակական հատկանիշները:Հակառակ դեպքում կարդալու արագությունը կարող է խանգարել բնագրի ճիշտ,սահուն,հասկանալով և արտահայտիչ կարդալուն:

Հետայբբենական շրջանում ընթերցանության համար առաջարկվում են գրական տարբեր ժանրային խմբերի պատկանող ստեղծագործություններ /բանաստեղծություններ, պատմվածքներ, հեքիաթներ, հանելուկներ, սուտասելուկներ, շուտասելուկներ/,որոնց ընթերցումը նպաստում է կարդալու բոլոր որակական հատկանիշների համալիր լուծմանը:

2.Գրելու կարողությունների զարգացում

Վայելչագրական կանոններին համապատասխան գրելու կարողությունների ձևավորման ուղղությամբ աշխատանքները ևս սկսվում են նախաայբբենական շրջանում /մասնիկների գրության, մատների ճկունության ուղղությամբ աշխատանք, տողի վրա կողմնորոշվելու ունակության ձևավորում և այլն/, շարունակվում են բուն գրաճանաչության շրջանում.վերջում արդեն երեխաները հիմնականում կարողանում են ազատ կողմնորոշվել տետրում և ընդօրինակելով կամ թելադրությամբ գրել տառեր, բառեր, նախադասություններ, փոքրիկ բնագրեր:

Կապակցված գրության համար ուսուցիչը պետք է իմանա հայերեն տառերի տեղադրության մասին/այս մասին աշակերտներին գիտելիքներ պետք չէ հաղորդել/ և նրանց պարզապես գործնականորեն սովորեցնի ,թե որ տառը ինչպես է կապվում իրեն հաջորդող տառի հետ:Այս կապակցությամբ պետք է իմանալ,որ հայերենի փոքրատառերն ունեն 4,իսկ մեծատառերը՝3 տեղադրություն:Առաջին տեղադրությանն են այն տառերը ,որոնց մասնիկները գրվում են միայն հիմնական տողի վրա.

1.*ա,ս,ու,ռ,օ,ռ,*

Երկրորդ տեղադրության են փոքրատառերն ու մեծատառերը, որոնց մասնիկները գրվում են ինչպես հիմնական տողի ,այնպես էլ վերևի օժանդակ տողի վրա՝

2.*ե,է,ժ,ծ,հ,ճ,մ,ն*

Ա Ե Զ Է Ժ Ծ Հ Մ Ն Շ Ո Չ Ռ Ս Տ Ռ ՈՒ Օ

Երրորդ տեղադրությանն են այն փոքրատառերն ու մեծատառերը,որոնց մասնիկները գրվում են ինչպես հիմնական տողի,այնպես էլ ներքևի օժանդակ գծերի վրա՝

3.*բ,գ,դ,զ,ը,թ,լ,ձ,ղ,յ,շ,չ,պ,ջ,տ,ր,ց*

Ը Լ Ղ Ջ

Չորրորդ տեղադրությանն են պատկանում այն փոքրատառերն ու մեծատառերը,որոնք մասնիկներ ունեն և՝ վերևի ,և՝ ներքևի օժանդակ գծերի վրա.

4.*ի,խ,կ,վ,փ,ք,ֆ*

Բ Գ Դ Թ Ի Խ Կ Յ Ղ Վ Ֆ Ր Ց Փ Ք

Պիտի հիշել,որ կապակցվող տառերն են .

ա,բ,գ,դ,ե ,ը,թ ժ,ի,խ,ծ,հ,յ,ն,ռ,ռ,ս,տ,ր,ց,ու,փ,ք,և,օ:

Չկապակցվող տառերն են.

զ,լ,կ,ղ,մ,շ,չ,պ,ջ,վ,ֆ:

Գրաճանաչության այս շրջանում պիտի ամփոփել,զարգացնել և ամրակայել տպագիր նյութը ձեռագիր վերարտադրելու ,մտքով իրար հետ կապված մի քանի նախադասություն գրելու,ինքնուրույն կազմած նախադասությունը/3_4 բառից կազմված/ գրի առնելու,գրությամբ և արտասանությամբ տարբերություն չունեցող բառերը թելադրությամբ գրելու, փոքրիկ բնագիրը ինքնաթելադրությամբ գրելու կարողությունները:

3.Բառապաշարի հարստացում ,խոսքի զարգացում

Այս ուղղությամբ աշխատանքները տանելիս կարևորվում են.

1.բառապաշարի մաքրումը,հղկումը և հարստացումը,

2.բառիմաստի ճշտումն ու դրա յուրացումն աշակերտներ կողմից,

3.բառապաշարի ակտիվացումը,օգտագործումը խոսքում,

4.կապակցված խոսքի հյուսումը:

Այս խնդիրները լուծվում են համալիր,միասնության մեջ:Դպրոցականները,կարդալով հետայբբենական շրջանի նյութերը,ծանոթանալով շրջապատող աշխարհի իրերի և երևույթների հետ՝ իմանում են կամ ճշգրտում դրանց անվանումները,սովորում են դրանք օգտագործել խոսքում,ուսուցչի հարցերում տրված պատասխաններում,ուսուցչի և դասընկերների հետ վարած երկխոսություններում,թեմատիկ նկարների բովանդակությունն վերարտադրելիս և այլն:Այս փուլում էական է գիտակցել,որ բառի յուրացման և ակտիվացման համար ոչ թե պիտի անընդատ մեխանիկորեն կրկնել,այլ ակտիվ օգտագործել տարաբնույթ խոսքային առաջադրանքների մեջ:

4.Գիտելիքներ և կարողությունների ամփոփում,համակարգում

Հետայբբենական շրջանում լեզվական նոր գիտելիքներ չեն հաղորդվում.պարզապես կրկնվում և ամրակայվում են ամբողջական բառերով կարդալու,կարդացածը հասկանալու և վերարտադրելու,առաջարկվոս թեմատիկ նկարի շուրջ պատմություններ հյուսելու,ուսուցչի տված հարցերը լսելու,հասկանալու և դրանց ճիշտ ու կոնկրետ պատսխանելու կարողությունները:

Ընթերցանության համար առաջարկվող բնագրի,ինչպես նաև տպագիր հիմքով տետրի՝հետայբբենական շրջանի համար նախատսված հատվածի հնչյունի,տառի,վանկի,բառի,նախադասության,պատմության կետադրության և առոգանության նշանների,ընդհանրացնող անունների,հատուկ անունների և անցած այլ լեզվական նախագիտելիքները և ամրակայել:

5.Նախապատրաստում բացատրական ընթերցանությանը

Սկսած առաջին դասարանի 2-րդ կիսամյակից՝մայրենիի դասերը իրականացվում են բացատրական ընթերցանության մեթոդորոշ տարրերի կիրառմամբ:Այս մեթոդի տարրերն օգտագործվում են դեռևս գրաճանաչության շրջանում,երբ երեխաները ոչ միայն կարդում էին առաջարկված բառերը,բառակապակցությունները,նախադասությունները,փոքրիկ բնագրերը,այլ վերլուծում էին դրանք,քննում,մեկնաբանում,կարծիք հայտնում հերոսների գործողություններ մասին և այլն:

Հետայբբենական շրջանում աստիճանաբար ներմուծվում են բացատրական ընթերցանության մեթոդի բոլոր բաղադրիչները՝զրույց,բնագրի ընթերցում,բառային աշխատանք բնագրի շուրջ,բովանդակության վերլուծում,ամփոփում :Այս շրջանում ընթերցանության դասի գերխնդիրը երեխաների մեջ կարդալու ցանկություն առաջացնելն է,այսինքն՝ընթերցասիրության և ընթերցողոկան կարողությունների ձևավորումը :Այս փուլում չափազանց կարևոր է ուսուցչի ճիշտ դիրքորոշումը,դասի մեթոդապես ճիշտ կառուցումը,բնագրի շուրջ տարվող որոնողական աշխատանք:Կարևորում ենք ընդգծել,որ ավանդաբար ընդունված՝միևնույն նյութի բազմակի ընթերցումն աշակերտների կողմից առանց լրացուցիչ առաջադրանքների չափազանց վտանգավոր է և խոչընդոտում է ընթերցասիրության դաստիարակությանը.միևնույն նյութի մի քանի անգամ ունկնդրումը ձանձրույթ է առաջացնում,ու աստիճանաբար երեխաների մեջ մարում է գրքի նկատմամբ հետաքրքրությունը:Այդ երևույթը կանխելու համար հարկավոր է մեկ դասի ժամանակ յուրաքանչյուր անգամ ընթերցելիս երեխաներին տալ տարաբնույթ առաջադրանքներ,որոնք կնպաստեն նաև ստեղծագործության ենթաշերտերի մեջ թափանցելուն,ընթերցածի իմաստը հասկանալուն:

Եզրակացություն

Ավարտական աշխատանքների շրջանակներում կատարած ուսումնասիրությունների արդյունքում եկել եմ հետևյալ եզրակացություններին .

.Գրաճանաչութան դասի գլխավոր նպատակը երեխային կարդալ սովորեցնելն է ,որի համար անհրաժեշտ է տեսողական զգայարանն աշխատեցնել լսողական և

խոսքարտաբերական զգայարանների հետ համատեղ։

.Ըստ գրաճանաչության մեթոդիկայի՝ կարդալն ու գրելը պիտի միասին ուսուցանել։Կարդալը նպաստում է գրելու կարողության ձևավորմանը, իսկ գրելը՝ կարդալու։

.Հնչյուն – տառերի ուսումնասիրման և յուրացման հաջորդական ընտրությունն առաջին հերթին պայմանավորված է առաջին դասարանի համար հնչյունային վերլուծական – համադրական աշխատանքի ոչ միայն կարևորությամբ, այլև՝ մատչելիությամբ։

.Այս փուլը ավելի հեշտ են հաղթահարում վեց տարեկանը լրացած երեխաները։ Աշխատանքն ավելի արդյունավետ է լինում,երբ երեխան իր առաջին քայլերում՝ գրատախտակի մոտ՝ լինի հաջողված,թե՝ ոչ, փորձն է անում։

Այդ ժամանակ ուսուցիչն ուղղում է աշակերտի կատարած սխալը,ճիշտ գրությունը տեսնում են դասարանի մյուս աշակերտները, որից հետո ավելի վստահ ու համարձակ են գրում նորածանոթ տառը։

Գրականության ցանկ

1.Ա.Տեր-Գրիգորյան,<<Գրաճանաչության մեթոդիկա>>,Երևան,1968թ.

2.Ջ.Գյուլամիրյան,<<Զանգակ>> Այբբենարանի մեթոդական ուղեցույց,Երևան-2003թ.

3.Ժ.Կոնդակչյան,Լ.Մանուկյան ,<<Վեց տարեկան երեխաների հետ տարվող ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպումը>> մեթոդական հանձնարարական,Երևան ,1973թ.

4.Ժ.Կոնդակչյան ,<<Գրաճանաչության պարապմունքների տիպային ծրագիր>>,Երևան,1984թ.

5.Մ.Բաղդասարյան <<Ճիշտ հնչարտասանության ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում>>,Երևան, ,<<Լույս>>,1988թ.

6.<<5-6 տարեկան երեխաների զարգացման չափորոշիչներ>>,ԿԳՆ,ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ,

Երևան-2007թ.

7.<<5-6 տարեկան երեխաների կրթակն համալիր ծրագիր>>, Երևան-2007թ.

8.<<Նախաշավիղ>> ամսագիր.5-6.2004թ,1.2005թ,3-4.2005թ,5-6.2005թ.

9.Ա.Գաբրիելյան ,<<Տառահանդես>>,<<Զանգակ>>,2001թ.

10.Ջ.Գյուլամիրյան <<Վեց տարեկանների ուսուցման առանձնահատկություններն առաջին դասարանում>>,Երևան,<<Լույս>>,1998թ.

11. Ա.Տեր-Գրիգորյան <<Աշխատանք այբբենարանով>>,Երևան,<<Լույս>>,1979թ

12. Ա.Տեր-Գրիգորյան <<Կարդալու և գրելու սկզբնական կարողությունների ձևավորումը>>, Երևան,<<Լույս>>,1985թ.

13.Ա.Քյուրքչյան ,Լ.Տեր-Գրիգորյան <<Այբբենարանի մեթոդական ուղեցույց>>, Երևան,<<Լույս>>,2001թ.: